ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

02-ը մայիսի 2018թ.
ժամը 12[15]

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ա. Աբովյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Մ. Հոխեյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Մ. Հոխեյան)

Ի գիտություն. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի քարտուղար 16.04.2018թ. էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել է առաջին տեղերը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկները և կոմիտեից ստացված տեղեկատվությունը /քանի որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցումն արվել է 10.04.2018թ., սակայն հարցման մասին տեղեկատվությունը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է 16.04.2018թ., /4-րդ աշխատանքային օրը/, այդ պատճառով էլ հանձնաժողովի քարտուղարը այն հանձնաժողովի անդամներին է տրամադրվել 17.04.2018թ./: Հանձնաժողովը ուսումնասիրելով առաջին տեղերը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը արձանագրեցին անհամապատասխանություններ մասնավորապես՝

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին «Դառես» ՍՊԸ-ի և «Երվադա» ՍՊԸ-ի /համատեղ գործունեությամբ, 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցներ/ կողմից որպես մասնագիտական փորձառության առկայության հավաստում ներկայացվել էր ՀՀ ՊՆ-ի հետ 12.03.2015թ. կնքված N ՇՀԾՁԲ-10/8-1 ծածկագրով պայմանագիրը, ընդ որում առկա էր ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲ վարչության կողմից տրված տեղեկանքն առ այն, որ նշված պայմանագիրը բարեխղճորեն և ժամանակին կատարված է: Գնահատող հանձնաժողովի կողմից N ՇՀԾՁԲ-10/8-1 ծածկագրով պայմանագրին կից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի ուսումնասիրությամբ պարզվեց, որ դրանց մի մասի վրա սխալ էր գրված պայմանագրի ամսաթիվը, սակայն ճիշտ էր գրված պայմանագրի ծածկագիրը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ գնահատող հանձնաժողովի նախագահը հարցում ներկայացրեց /18.04.2018թ./ ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲ վարչությանը՝ առաջարկելով ուսումնասիրել վերը նշված պայմանագրի կատարման վերաբերյալ իրենց տնօրինության տակ եղած փաստաթղթերը և տալ պարզաբանում:

ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲ վարչության կողմից 26.04.2018թ.՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահի հարցմանն /18.04.2018թ./ ի պատասխան ներկայացվեց գրություն, որտեղ նշված էր, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից /«Դառես» ՍՊԸ և «Երվադա» ՍՊԸ /համատեղ գործունեությամբ// որպես մասնագիտական փորձառության առկայության հավաստում ներկայացված հաշիվ-ապրանքագրերում պայմանագրի ամսաթվի մասով առկա անհամապատասխանության հետ կապված հայտնում են, որ «Երվադա» ՍՊԸ-ի հետ 12.03.2015թ. կնքված N ՇՀԾՁԲ-10/8-1 պայմանագրի շրջանակներում ներկայացված հաշիվ-ապրանքագրերից թվով 8-ում պայմանագրի ամսաթիվ դաշտում կատարված սխալ լրացումը թյուրիմացության արդյունք է և նշված հաշիվ-ապրանքագրերն իրոք առնչվում են 12.03.2015թ. կնքված N ՇՀԾՁԲ-10/8-1 պայմանագրին, որին ի հավաստում ներկայացնում են դրանց կից հանձման-ընդունման արձանագրությունների պատճենները 8 թերթից, որն էլ ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ «Դառես» ՍՊԸ և «Երվադա» ՍՊԸ /համատեղ գործունեությամբ/ ներկայացված որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատեցին բավարար:

- «Սեմանգ» ՍՊԸ կողմից ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում նույնպես արձանագրվել են անհամապատասխանություններ՝ մասնավորապես. «Սեմանգ» ՍՊԸ կողմից ներկայացված պայմանագրերի պատճենները ամբողջությամբ ներկայացված չեն /06.11.2017թ. կնքված N ՀՀԱՄԱՇ-ՄԱԳՎԾՄ-17/05 ծածկագրով պայմանագրի 7.13 կետում նշված է, որ «Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից» և սույն Պայմանագրի N1, N2, N3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, այն ինչ ներկայացված պայմանագրի պատճեն կազմված է 10 էջից և կից ներկայացված են Պայմանագրի N1, N2 և N 3 հավելվածներ, իսկ 06.06.2017թ. կնքված N 77-17/01 ծածկագրով պայմանագրի 9.6 կետում նշված է, որ «Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից» և Պայմանագրի N2, N3 և N 4 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը, այն ինչ ներկայացված պայմանագրի պատճեն կազմված է 8 էջից և կից ներկայացված են Պայմանագրի N1, N2 և N 3 հավելվածներ/: Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը /26.04.2018թ./ արձանագրված անհամապատասխանության մասին www.armeps.am կայքի ոչ ավտոմատ ծանուցումով տեղեկացրեց «Սեմանգ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում /27.04.2018թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ շտկված տարբերակը ուղարկել m.hokheyan@mil.am էլեկտրոնային հասցեին: «Սեմանգ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկեց անհամապատասխանությունները և վերջինիս կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատվեց բավարար:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցներից՝ «Դառես» ՍՊԸ-ի տնօրեն Ն. Քոսակյանի /«Երվադա» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեությամբ/ կողմից ներկայացվել էր գրությունը, որտեղ նշված էր, որ «Դառես» ՍՊԸ-ի տնօրեն Ն. Քոսակյանը ցանկանում է, որ իրեն տրամադրվի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով ընթացակարգի գնանշման հարցման շրջանակներում «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով նախատեսված որպես մասնագիտական փորձառություն որակավորման չափորոշիչ նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերի պատճենները, սակայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ մերժվեց «Դառես» ՍՊԸ-ի տնօրեն Ն. Քոսակյանի կողմից ներկայացված պահանջը, քանի որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով ընթացակարգի գնանշման հարցման շրջանակներում մի մասնակցի կողմից ներկայացված հրավերով նախատեսված որպես մասնագիտական փորձառություն որակավորման չափորոշիչ նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերի պատճենները՝ մեկ այլ մասնակցին տրամադրելու հնարավորություն:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:

1.2 ***02.05.2018թ.*** հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Սեմանգ» ՍՊԸ-ի, «Դառես» ՍՊԸ-ի և «Երվադա» ՍՊԸ-ի /համատեղ գործունեությանբ/ որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցներ՝ 1-ին չափաբաժնում՝ «Սեմանգ» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ չափաբաժնում՝ «Դառես» ՍՊԸ-ին և «Երվադա» ՍՊԸ-ին /համատեղ գործունեությանբ/ և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Հոխեյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 12^{30}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ս. Աբովյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Հ. Բաղալյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝	Մ. Հոխեյան

02.05.2018թ.